

Մ ԲՈՆԱԳԻՏԱԿԱՆ



Տ. ԶԱՐԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԲԱՂՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏՃԱՐՈՒՄ

(2 հուլիսի 2000 թ.)

*«Զմեղս քո ողորմությանը քառնջիր, եւ
զանօրէնութիւնս քո՝ գթովք փրանկաց»*

(Դան. Դ 24)

*«Զո մեղքերը քավիր ողորմությամբ և քո
անօրէնությունները՝ աղքատներին գթա-
լով»:*

Անավասիկ Աստվածսիրության ճանապարհով առաջնորդող Դանիել մարգարեի այս պատգամը բնորոշում է քրիստոնյային իբրև ողորմած և գթասիրտ անհաւա-
կանություն: Մարգարեի այս պատգամը նկարագրում և մեկնում է քրիստոնեական
ամենամեծ առաքինություններից մեկի՝ ողորմածության խորհուրդը: Ողորմածու-
թյունը սիրո և հավատի իրականացումն է, որ բխում է առաքինի և գթասիրտ հոգիներից:
Ողորմածությունը, ինչպես քրիստոնեական հավատի և սիրո դրսևորում, Աստ-
վածաշունչ մաքրանում, մասնավորապես Նոր Կտակարանում, հաճախ է շեշտված:
«Եղեք գթասիրտ, ինչպես գթասիրտ է ձեր Երկնավոր Հայրը», - պատգամում է Հի-
սուս: Առաջին քրիստոնյաները հենց այս պատվիրանին հետևելով էր նաև, որ քրիս-
տոնեական համայնքների ձևավորման սկզբում արդեն իսկ կազմակերպում էին հա-
սարակաց հացկերություններ, օգնում աղքատներին, խնամում կստրկալներին: Եվ
խնաստրկավորվում էր մեր Եկեղեցու նվիրական ծեսերից մեկի՝ մատաղի խորհուրդը,
որպես լավագույն դրսևորումը ողորմածության և գթասիրտության: Հետևաբար մա-
րադը, որը լինելով Աստծուն ուղղված գոհության արտահայտություն, լինելով ողոր-

մածության դրսևորում, ոչ թե պետք է նույնացնել կուռքերին զոհ մատուցելու հեթանոսական արարողության հետ, այլ առաջնորդվել նրա քրիստոնեական բովանդակությամբ, այն է՝ սիրով արված նվիրաբերություն, ողորմություն՝ կարիքավորներին բաժանելու համար:

Ողորմածությունը քրիստոնյայի այն հատկանիշն է, որն առավել է նրան մոտեցնում Աստծուն, որովհետև Աստված ամենաողորմած է, և Նա է, որ Իր ողորմությունն անընդհատ բաշխում է մեզ՝ մահկանացուներին: Ուստի ողորմածությունը մի առաքիլություն է, որ մեզ արժանացնում է Աստվածային ողորմությանն ու սիրուն: Այո, մարդու երկրային կյանքը մի ակնթարթ է փիեզերական հավերժության մեջ: Մարդ էակը իր առաքիլի կենցաղավարությամբ, իր բարոյական նկարագրով ու գործով է արժևորում այդ ակնթարթը՝ հավերժացնելով ընդմիջ: Այդ ակնթարթը յուրաքանչյուրիս համար պետք է դառնա բարիք գործելու, կարիքավորներին սատարելու, անօգնականին գորավիզ լինելու, հիվանդին օգնելու, մի խոսքով՝ ողորմածության ակնթարթ: Այս աշխարհը, որն ամբողջապես Աստծո ունեցվածքն է, հանձնված է մարդուն, որպեսզի նա, քանի դեռ աշխարհի բարիքներն իր ձեռքում են, օգտվի դրանցից, իշխի դրանց վրա, ինչպես Ադամ նախահորը պարտվիրում է Աստված. «լցրեք երկիրը, փրեցեք դրան...»: Խնդիրն այն է, սակայն, թե մարդն ինչպես կգործադրի իրեն տրված հնարավորությունը, ինչպես կիրագործի բարիքները փնտրի՞նողի իր մենաշնորհը: Ամենակարևորը, որ նա իր կյանքի ընթացքում այդ բարիքները կարողանա փնտրի՞նել այնպես, որ դրանցից օգտվեն բոլորը՝ և՛ հարազատը, և՛ ընկերը, և՛ աղքատը, և՛ անօգնականը: Այս փնտրիմունը իրական ողորմածության նախադրյալներից է: Թեպետ ողորմածությունը կարողայալ մարդու համար է կատարվում, սակայն ողորմություն անողի գոհողության նպատակը Աստծուն է ուղղված, իսկ այս դեպքում Ամենակալ Աստված համարում է, թե այն իր փառքի համար է արվել, ինչպես Հիսուս ասում է Մարթեոսի Ավետարանում. «Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, ինձ համար արեցիք»:

Նյութական հարստությունը իմաստավորվում է, եթե այն քրտնաջան կամ խելացի աշխատանքով է ստեղծվել: Այն պետք է օգտագործվի բարի նպատակի համար, մինչդեռ նույն հարստությունը անիրավ ու կործանարար է, երբ վերածվում է պաշտամունքի, այսինքն՝ երբ ոչ թե մարդն է այն փնտրի՞նում, այլ ընդհակառակը՝ հարստությունը, դրամը մարդուն: Մեր Մուրք Եկեղեցին դատապարտում է և՛ ժապուրությունը, և՛ անհիմն շռայլությունը, ինչը գալիս է, ինչպես ասացինք, դրամից կախման մեջ լինելու հանգամանքից: Ժապուրությունն ու անհիմն շռայլությունը մարդու բարոյա-հոգևոր նկարագիրը ավերող գայթակղություններ են: Դեռ ավելին. շռայլությունը մարդուն փանում է զեխության, իսկ զեխությունը ամենադատապարտելի արարքներից է, ինչպես իր «խրատի Թանգարան» գրքում նշում է Պողոս Պարթիարը Ադրիանապոլսեցին. «Դատաստաններից չեն ազատվում և նրանք, ովքեր թեպետ աղքատների հանդեպ ողորմած են, սակայն գինարբուքների ու խնջույքների ժամանակ ափերով լիքը արծաթ ու ոսկի են մատուցում երգողներին...»:

Մարմնավոր բարիքները, որ Աստուծոց նրանց պարգևվել են բարեկարգ մարավարարությամբ ձեռք բերելու հոգևորը, անպիտան ու վնասակար բաների համար են օգտագործվում»:

Արժույթն ուղղործության դերը քրիստոնյայի կյանքում, ընդհանրական Եկեղեցու սուրբ հայրերից Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Խուրիկ Ատրիկն նշում են, որ քրիստոնյան պետք է ունենա երեք գործուն առաքիլություն. պահեցողություն, աղոթասիրություն և ուղղործություն: Մեր Եկեղեցու հայրերից Խոսրով Անձևացին շեշտում է, որ ուղղործությունը մարդուն հանում է Երկնավոր Թագավորի մոտ, այսինքն մարդու՝ մեղքերից թողափվելու և Աստծո հետ հաշտվելու կարևորագույն միջոցներից է այն, ինչը համընկնում է Դանիել մարգարեի մարքին, թե «Զո մեղքերը քաղի որդրությամբ և քո անօրենությունները՝ աղքատներին գթալով»: Պետք է, սակայն, դա արվի ամբողջ հոգով ու սրտով, անկեղծորեն, ինչը սովորեցնում է մեզ Հիսուս. «Զգույշ եղեք, որ ձեր ուղղությունը մարդկանց առջև չանցնի, որպես թե այն լինի ի ցույց նրանց, այլապես վարձ չեք ընդունի ձեր Հորից, որ երկնքում է»: Ամենակարևորը ներքին մղումն է, բաղձանքը, անմնացորդ նվիրումն ու ցանկությունը: Այսօրվա Եսայու ընթերցվածքում էլ Աստված ասում է. «Իմ ինչին են պետք ձեր բազմաթիվ գոեքեր..., սովորեցեք բարիք գործել, արդարություն փնտրեցեք, փրկեցեք զրկվածին, արդարադատ եղեք որբի նկատմամբ»: Աստվածապապական այս ոգին միշտ արթուն և կենդանի է եղել մեր դարավոր քրիստոնեական կյանքում, բնակվելով մեր սրբազան անհատականությունների մեջ: Այս ոգին են մեզ փոխանցել նաև չորրորդ դարում ապրած Սուրբ Ներսես Մեծ Հայրապետն ու Խաղ եպիսկոպոսը, որոնց Գրքերը երեկ ոգեկոչեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Մեր պատմության դրամատիկ այդ դարաշրջանում Ներսես Մեծը եղավ առաջին այն Հայրապետը, որ իր որբացյալ ժողովրդի թշվառ զավակների համար եկեղեցիների ու ճեմարանների կողքին կառուցեց անկեղևաններ, որբանոցներ, ծերանոցներ, աղքատանոցներ: Աղքատասեր և ուղղործ Ներսես Մեծի աշակերտն ու անբաժան գործակիցը՝ Խաղ եպիսկոպոսը, ժամանակի Դվինի առաջնորդը, հայտնի է իր Աստվածասիրությամբ, իր հավատի նախանձախնդրությամբ ու իր ուղղործասիրությամբ: Հիշարժի է ասված, որ պատմության ճգնաժամային պահերին է, երբ ծնվում են այսպիսի անհատներ, որոնց պատմությունը ոսկեշղարշ մշուշների խանձարուրով է հանդերձում, արշալույսի պես բացվող մարդկանց ցավի և երազի վերևում: Ահավասիկ ուղղործության ու գթասրտության օրինակներ, որոնք այսօրվա մեր դժվարին ժամանակներում առաջնորդող և դաստիարակող դեր են կատարում մեզ համար:

Միքելի՜ հավաքագյալներ.

Մեր ներկան կարելի է կոչել պատմության այն դժվարին դարաշրջաններից մեկը, երբ շատ հաճախ նահանջում են հոգեկան արժեքներն ու առաջնորդող ճշմարիտ գաղափարները, ինչը կործանարար ազդեցություն է ունենում յուրաքանչյուր ազնիվ մարդու ներաշխարհի վրա, բայց կա մեկ իրողություն, որ շատ հաճախ մեր հոգեկան աշխարհը աններդաշնակ, անկայուն և անհանգիստ ենք դարձնում մենք

ինքներս: Կյանքի դժվարին ճանապարհին գայթակղվում ենք, հուսահարվում, ամբարտապան դառնում, շեղվում մեր հավաքի ակունքներից, ճշմարիտ ուղուց ու ավանդույթներից: Հիշենք, որ մեզ համար քրիստոնեական առաքինությունների օրինակ ու խորհրդանշան հանդիսացող Ներսես Մեծ Հայրապետը և Խաղ եպիսկոպոսը չաասանվեցին իրենց հավաքի մեջ, չվախեցան փորձություններից, այլ մնալով մեր ազգային-եկեղեցական վեհ սկզբունքներին հավաքարիմ, ավանդեցին մեզ ճշմարիտ բարության, աստվածահաճո գթասրտության, սրտաբուխ ողորմածության հավերժական խորհուրդը: Այսօր մենք նրանց օրինակով նաև աշխարհնք մաքուր պահել մեր անձերը չար մտքերից, վրդիությունից, նախանձից զերծ պահենք մեր միտքն ու հոգին, աշխարհնք ողորմած, գթասիրտ լինել մեր նմանների հանդեպ՝ միշտ հիշելով, որ ոչ ցուցամու միտումնավորությամբ ճշմարիտ սրտացավ ողորմածությունը հոգեկան մեծագույն առաքինություն է, սրտի, սիրտ գործ է և ոչ թե դրամի կամ հարստության փնտռանք: Մենք բոլորս հոգալով մեր հոգու և մարմնի մասին, պիտի ջանանք հոգին նվիրել աղոթքներին, մարմինը՝ պահեցողությանը, և բարի գործերով, հարկապես ողորմածությամբ արտահայտենք մեր սերը, որպեսզի ձերբազատվենք մեղքերից և դառնանք լուսո որդիներ՝ յուրաքանչյուրս հիշելով մարգարեի խոսքերը. «Քո մեղքերը քավիր ողորմությամբ և քո անօրենությունները՝ աղքատներին գթալով»: Վստահ եղեք, եթե մենք մեր կենցաղում կյանքի կոչենք, իրագործենք այս խոսքերը, ապրենք բարիք գործելով, կիսազվի մեր ներաշխարհը, կներդաշնակվի մեր էությունը աստվածային կամքի հետ:

Միրելիներ, այսօր առավել քան երբևէ մեր ժողովուրդը կարեկցության ու գթասիրտ վերաբերմունքի կարոտ է: Անտարբեր չլինենք մեր կողքին ապրող, ամեն պահ մեզ հանդիպող խեղճ ու անօգնական մարդկանց նկատմամբ: Մեր օրվա հացը կիսենք նրանց հետ՝ իբրև գթասիրտ ու ազգասեր քրիստոնյա: Ձերբազատվենք այն հոգեբանությունից, որ անտարբերության է փառում: Չէ՞ որ մենք կարող ենք այդ անտարբերությամբ հոգիներ խամրեցնել, մարդկային ճակատագրեր կործանել և հակառակը՝ սիրով, հոգատարությամբ, ողորմածությամբ մարդկային կյանք փրկել, սրտեր պայծառակերպել՝ արժանի լինելով աստվածային ողորմած օրհնություններին ու շնորհներին:

Շնորհ, սեր և խաղաղություն ձեզ հավիտյանս հավիտենից, ամեն: